ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 17.03.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-30/17 բողոքը քննող հանձնաժողովի՝

ԳԲԽ-30/17 բողոքը քննող հանձնաժողովը, գործելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Շին նախագիծ» ՍՊԸ-ի 13.03.2017թ. բողոքով ԳԲԽ-30/17 բողոքը քննող հանձնաժողովին ներկայացրած միջնորդությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի և 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Շին նախագիծ» ՍՊԸ-ի 13.03.2017թ. բողոքով ներկայացված «ՀՀ ԱՄ-ԲԸԱՀԾՁԲ--17/01» ծածկագրով առանց հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից պայմանագիր կնքելու գործընթացը կասեցնելու մասին միջնորդությունը բավարարել:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Անդամներ՝ **Ավետիսյան Հրաչյա**

Գալստյան Տիգրան